Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/56755/02/22

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

17.03.2023թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր Ս. Երիցյանի

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործը, ըստ հայցի <<Ջերմ տուն>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 03551023, պետական գրանցման համար՝ 80.110.1086350, հասցեներ՝ ՀՀ, ք. Եղվարդ, Նար-Դոսի փ., տ. 22, ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 6) (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ <<Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն>> ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00000911, պետական գրանցման համար՝ 264.140.01460, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78) (այսուհետ նաև՝ Պատասխանող), երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարությանի (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան փ. 1)՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՎՃՌԵՑ

1. <<Ջերմ տուն>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն>> ՓԲԸ-ի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարությանի՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**